ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 9 հունվարի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Է. Շաթիրյանի

Անդամակցությամբ՝ Ս. Սաֆարյանի

Հ. Թովմասյանի

Քննության առնելով «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ (այսուհետ՝ Դիմող) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2023 թվականի դեկտեմբերի 27-ին, որով դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ հոդվածին և ՀՀ Սահմանադրությանը հակասող՝ հաշվի առնելով այն մեկնաբանությունը, որ փոխառության պայմանագրով փոխառուի պարտատերը կարող է հանդիսանալ որպես շահագրգիռ կողմ փոխառության պայմանագիրը դատական կարգով վիճարկելու պահանջով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի դրույթները ճանաչել՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ հոդվածին հակասող՝ իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որ փոխառության պայմանագրում առկա նշումը, ինչպես նաև փոխառուի կողմից գումարը ստացված լինելու

փաստի ընդունումը բավարար չեն փոխառության պայմանագիրը կնքված համարելու և գումարը հանձնված լինելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասը հակասող ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին, 79-րդ հոդվածին այն մեկնաբանությամբ՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում այն մեկնաբանությունը, որ դատարանը առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով հայցը բավարարում է՝ առանց դրա նկատմամբ անվավերության հետևանքները կիրառելու և առհասարակ դրանց անդրադարձ կատարելու»:

2. Դիմողը, մասնավորապես, գտնում է. «(…) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասին դատարանի տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և այդպիսի մեկնաբանությամբ ստացվում է, որ փոխառուի բոլոր պարտատերերը կարող են վիճարկել պարտապանի կողմից կնքած բոլոր գործարքները և հանդիսանան շահագրգիռ կողմ (…):

(…)

(…) փոխառության գումարը փոխատուից ստացված չլինելու հիմքով փոխառության պայմանագրի վիճարկման իրավունք ունի փոխառուն, այլ ոչ թե փոխառուի բոլոր պարտատերերը: Բոլոր դեպքերում, երբ պայմանագրի կողմ հանդիսացող փոխառուն պնդում է, որ ստացել է փոխատուից փոխառության գումարը, տվյալ պայմանագիրը չի կարող համարվել չկնքված, քանի որ գումարը ստանալու ապացույցը հանդիսանում է հենց փոխառության պայմանագիրը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի առնչությամբ Դիմողը նշում է. «Ընկերության կողմից դրամարկղային գործառնությունների կարգը խախտելը դեռևս չի կարող փաստել, որ ընկերությունը չի ստացել վիճելի փոխառության գումարը:

(…)

Գտնում ենք, որ փոխառության պայմանագիրն է հենց այն ապացույցը, որը հավաստում է փոխառության իրավահարաբերության առկայությունը, քանի որ այն բովանդակում է տեղեկություն՝ պայմանագրի կնքման պահին փոխառության գումարի տրամադրման մասին: Իսկ տվյալ ապացույցից բացի էական է նաև փոխառուի դիրքորոշումը և տվյալ փաստի ընդունումը: Իսկ փոխառության գումարի տրամադրման վերաբերյալ դրամարկղային

փաստաթղթի անհրաժեշտությունը կառաջանար այն դեպքում, երբ փոխառության պայմանագիրը չպարունակեր տեղեկություն գումարը տրամադրվելու վերաբերյալ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ Դիմողը, մասնավորապես, նշում է. «(...) ***սույն դեպքում, դատարանը համարելով, որ օրենքի ուժով փոխառության պայմանագիրը առոչինչ գործարք է՝ առանց դրա դատարանի կողմից այդպիսին ճանաչվելու, պետք է կիրառեր առոչինչ գործարքի անվավերության հետևանքները: Անհնար է պատկերացնել մի իրավիճակ, երբ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման հայցապահանջը բավարարվում է, սակայն դրա հետևանքներին որևէ անդրադարձ չի կատարվում, ստացվում է պարադոքսալ մի իրավիճակ, ինչպես և տեղի է ունեցել սույն դիմումով ներկայացված դատական գործի շրջանակներում: Դատարանը բավարարել է առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը, սակայն որևէ անդրադարձ չի կատարել անվավերության հետևանքներին և չի կիրառել ռեստիտուցիայի կանոնները: Այդպիսով, ՀՀ սնանկության դատարանը, ընկերությանը սնանկ ճանաչելու դիմումը քննելիս, պետք է անդրադառնա, թե այն գործարքը, որը օրենքի ուժով առոչինչ է համարվել և դատարանով կիրառվել է առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, արդյոք հետևանքների կիրառման պարագայում առկա չէ որևէ պարտավորություն որի հիմքով պարտապանը կարող է սնանկ ճանաչվել***»:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված նյութերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում

ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ *վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:* Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը (…) կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ (…) *լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար* նույն հոդվածի 3-րդ մասով *նախատեսված վեցամսյա ժամկետը:*

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ թիվ ԵԴ/8529/02/20 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը (տվյալ գործով բարձրացված հարցերի առնչությամբ վերջնական դատական ակտը) կայացվել է 2022 թվականի հունիսի 1-ին: Մինչդեռ սույն անհատական դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվել 2023 թվականի դեկտեմբերի 27-ին՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց ավելի քան վեց ամիս անց: Այսինքն՝ սույն անհատական դիմումը Սահմանադրական դատարան ներկայացնելու պահին արդեն իսկ լրացել էր սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը, առանց անդրադառնալու սույն դիմումի ընդունելիության մյուս պայմաններին, եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 3 և 5-րդ մասերի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ԻՄՊԵՐԻԱԼ ՊԱԼԱՍ ՀՈԹԵԼ» ՍՊԸ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Է. Շաթիրյան

Անդամներ՝ Ս. Սաֆարյան

Հ. Թովմասյան

9 հունվարի 2024 թվականի
ՍԴԴԿՈ-1